Ապառաժ

Հիմնադրված է 1991 թվականին: 1 (522) հունվար 17-31, 2023թ.

ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՀՅ Դաշնակցության Արցախի Կենտրոնական Կոմիտեի պաշտոնաթերթ

Մենք համացանցում

www.aparaj.am

Քաղաքական նախաձեռնություններ շրջափակման պայմաններում

Շարունակվող շրջափակումը անկյունադարձային փոփոխությունների է ենթարկել Արցախում բնակվող յուրաքանչյուր անհատի առօրյա կյանքը: Այդ փոփոխությունները անհատական դաշտից առավել նկատելի են Արցախի քաղաքական, տնտեսական, անվտանգային եւ կենսապահպանման համակարգերում: Բնական է, որ լուծելի խնդիրների առաջին շարքում պարենի, առաջին անհրաժեշտության ապրանքների սակավության վերացման կամ հավասարաչափ բաշխման համակարգի ստեղծումն է:

Պետք է անկեղծորեն նշել, որ այդ ասպարեզում օպերատիվ շտաբը կատարել է արդյունավետ աշխատանք, եւ այսօրվա դրությամբ այդ խնդիրը կարելի է լուծված համարել: Թվում է, թե կենցաղային հարցերի լուծումը կարող է բավարար լինել ավելիին դիմակայելու համար, եւ խնդիրները կարելի է փարատված համարել: Սակայն իրականությունն այլ է: Նման պայմաններում քաղաքական ճիշտ մոտեցումների կիրառումը հնարավորություն կտա արդյունավետ լուծումներ գտնել եւ լավագույն տարբերակներ ի հայտ բերել:

Քաղաքական կողմնորոշումների եւ հաշվարկների դրական ազդեցությունը համատարած է եւ շոշափելի կլինի յուրաքանչյուր ոլորտում՝ թե՛ արտաքին հարաբերությունների եւ թե՛ ներքին կառավարման համակարգերում:

Քաղաքական ուժերի ներքին համերաշխությունը, համախմբվածությունը, մեկ թիրախի ուղղությամբ գործունեության կենտրոնացումը էական ազդեցություն ունեն ներքին կառավարման եւ արտաքին քաղաքական նախաձեռնությունների արդյունավետությունն ապահովելու համար: Մյուս կողմից, ճգնաժամային պայմաններում անհրաժեշտ վերադասավորումները պատճառ կդառնան, որպեսզի նվազեցվի հնարավոր լարվածության օջախների առկայությունը:

Ելնելով վերը նշված իրողություններից, Արցախի քաղաքական դաշտում այժմեական են մնում մի շարք նախաձեռնությունների եւ միջոցների կիրառումը:

Այդ լուծումներից առաջինը դեռեւս պատերազմից անմիջապես հետո բոլորի մոտ առաջացած մայր օրենքի՝ Սահմանադրության փոփոխության հարցն է: Սահմանադրության բարեփոխումների միջոցով առիթ կլինի մեկ անգամ եւս ամբողջացնել 30 տարիների ընթացքում պետականաշինության գործընթացում գրանցված հաջողությունները եւ այն համապատասխանեցնել օրվա պահանջներին:

Շրջափակման հետեւանքներից մեկը նաեւ Արցախի քաղաքական մեկուսացումն է: Դա եւս Ադրբեջանի նպատակներից մեկն է, որի միջոցով փորձում է բարոյահոգեբանական ճնշման ենթարկել Արցախի ազգաբնակչությանը: Ներկա դրությամբ Ադրբեջանին դա չի հաջողվում լիարժեք իրականացնել, քանի որ Սփյուռքի զանազան օջախներում առկա է ակտիվություն եւ լոբբիստական աշխատանքներ: Սակայն այդ բոլորը չի կարելի բավարար համարել: Անհրաժեշտ է Արցախի ԱԳՆ-ին կից ձեւավորել աշխատանքային խումբ արտաքին քաղաքական նախաձեռնությունների մշակման եւ տեղեկատվական, քարոզչական աշխատանքները համակարգելու համար:

Եվ վերջապես, այս իրավիճակին համահունչ պետական կառավարման համակարգի ձեւավորման անհրաժեշտությունն օրախնդիր է: Ներկա դրությամբ աշխատող օպերատիվ կառավարման շտաբը կարողանում է ինչ-որ չափով լուծել կենցաղային, առօրյա հարցեր, սակայն, ինչպես ասվեց, այլ մակարդակի քաղաքական հարցերի լուծումը եւս անժամանցելի է: Իսկ այդ քաղաքական մարմինը պետք է ի մի բերվի քաղաքական համախմբությամբ եւ օրենքի թելադրանքով:

Ի զորակցություն շրջափակված Արցախի

«Արցախը մե՛րն է», «Մե՛նք ենք Արցախը», «Կեցցե՛ արցախահայությունը» եւ նման կարգախոսներով լիբանանահայության բոլոր շերտերը հունվարի 25-ին Լիբանանի Պուրճ Համուտ քաղաքում իրենց զորակցությունը հայտնեցին 45 օրեր ի վեր շրջափակման մեջ գտնվող, կենցաղային, մարդկային, առողջական, ջեռուցման, սննդի, դեղորայքի եւ բազում դժվարությունների դեմ հանդիման կանգնած, սակայն պայքարող եւ իր հողին կառչած արցախահայությանը:

Սոցիալ-դեմոկրատ հնչակյան կուսակցության, Հայ Յեղափոխական Դաշնակցության եւ Ռամկավար Ազատական կուսակցության կողմից կազմակերպված, Ադրբեջանի կողմից ծավալված հայաթափման արշավի դեմ եւ Արցախին զորակցող հավաքին լիբանանահայերն իրենց բարձրացրած պահանջատիրական պաստառներով, արտասանած ազգային շնչով բաբախող կարգախոսներով հաստատեցին, որ Արցախի հայկականությունն անսակարկելի է, արցախահայությունը Հայաստանին ու աշխարհին կապող միակ ճանապարհի՝ Բերձորի միջանցքի բացումը հրամայական է: Միջազգային ընտանիքը պետք է քայլեր ձեռնարկի Արցախում էթնիկ նոր սպանդի առաջն առնելու համար՝ շեշտելով, որ յուրաքանչյուր լիբանանահայ կանգնած է զրկանքներով ապրող, սակայն տակավին իր կորովն ու հավատքը չկորցրած արցախցու կողքին:

Այս առիթով Պուրճ Համուտի բոլոր վաճառատներն ու հաստատությունները փակել էին իրենց դռները եւ ընդառաջելով հայ քաղաքական երեք կուսակցությունների կոչին՝ մասնակից դարձել հավաքին: Հավաքի ժամանակ ելույթներ ունեցան երեք կուսակցությունների ներկայացուցիչները:

ՀՅԴ-ի կողմից խոսեց Լութֆիկ Այվազյանը, ով նշեց, որ Հայաստանն ու Լիբանանը շրջապատված են իրենց գոյությանը սպառնացող վտանգներով: Նա կոչ ուղղեց միջազգային ընտանիքին՝ թույլ չտալու, որ այս երկու երկրները փլուզվեն, որովհետեւ նրանք մարդկային ու քաղաքակրթական պատգամի երկրներ են:

Անդրադառնալով Արցախի շրջափակմանը՝ նա նշեց, որ ադրբեջանցիներն ահաբեկչական արարքներ են գործում արցախցի պատանիների եւ անզեն ժողովրդի վրա՝ ստեղծելով անմարդկային քաոս, որը հիշեցնում է 1915-ի Հայոց ցեղասպանությունը:

«Այսօրվա մեր հավաքի նպատակն է՝ դատապարտել Արցախի դեմ գործված՝ Ադրբեջանի եւ Թուրքիայի ոճրային շրջափակումը, եւ հաստատել մեր զորակցությունը Արցախին եւ արցախցիներին, ինչպես նաեւ Հայաստանի սահմանամերձ շրջաններին: Կոչ ենք ուղղում միջազգային ընտանիքին եւ միջազգային կազմակերպություններին՝ անմիջապես դիմելու պետք եղած միջոցառումներին եւ ստիպելու, որ Ադրբեջանը վերջ տա ազատ Արցախի անիրավ շրջափակմանը: Արցախի ապագան անվիճելի է, նրա ապագան անկախությունն է ու ազգային ինքնորոշման իրավունքը: Այս է մեր ուխտը բոլոր նահատակների եւ այս սուրբ իրավունքի համար պայքարած հերոսների առաջ»,- իր ելույթում ասաց Լ. Այվազյանը:

Այն պահին, երբ Պուրճ Համուտում լիբանանահայության բոլոր հատվածներն իրենց զորակցությունն էին հայտնում Արցախին եւ պահանջում Բերձորի միջանցքի վերաբացումը, Այնճարի մեջ եւս տեղի ունեցավ նմանօրինակ զորակցական հավաք:

Այնճարի եւ Զահլեի հայությունը համախմբվեց Այնճարում՝ բողոքելու համար Ադրբեջանի հակահայ քաղաքականության դեմ: Ելույթներով հանդես են եկել կուսակցական ու հոգեւոր շրջանակների ներկայացուցիչներ:

Հայ դատի Ամերիկայի հանձնախմբի առաջնորդությամբ Ամերիկայի Միացյալ Նահանգներում ձեւավորվել է «Save Karabakh» կոալիցիան: Այս նախաձեռնությունը հաջորդել է ԱՄՆ Կոնգրեսում Արցախի շրջափակման ադրբեջանական քաղաքականությունը դատապարտող երկկուսակցական բանաձեւի շրջանառության մեջ դնելուն, որը նախաձեռնել են Կոնգրեսի հայկական խմբի համանախագահներ Ֆրենք Փալոնը, Գուս Բիլիրակիսը, Ադամ Շիֆը, Դավիթ Վալադաոն եւ ԱՄՆ Ներկայացուցիչների պալատի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի ավագ անդամ Բրեդ Շերմանը:

→ 2

Բանակն անպարտելի է, երբ այն առաջնորդում են ոգով արիները, պատիվ եւ ազգային արժանապատվություն ունեցողները

Հունվարի 28-ին լրանում է Հայոց բանակի կազմավորման 31-րդ տարեդարձը: Տոնի առթիվ շնորհավորական ուղերձ է հղել Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսը.

«Հայոց բանակը կազմավորվեց մեր անկախության վերահաստատման տարիներին, դարձավ պատվարն ու պահապանը հայոց վերածնյալ պետականության, երաշխավորը մեր ժողովրդի խաղաղ ու անվտանգ կյանքի: Մեր խիզախ զորավարների ու զինվորների քաջագործություններով, նաեւ բանակին սատարող մեր ժողովրդի պայքարով ազատագրվեց Արցախ աշխարհը, եւ արցախահայությունն իր անկախ կյանքը կառուցելու հնարավորություն ունեցավ:

Արցախյան 44-օրյա աղետալի պատերազմը, անցյալ տարվա սեպտեմբերին Հայաստանի սահմանների նկատմամբ ոտնձգությունները, հառնած մարտահրավերները եւ պաշտպանական լրջագույն հիմնահարցերը նոր հրամայականների առջեւ են կանգնեցրել մեր երկիրն ու ժողովրդին: Այս ծանր իրավիճակում առաջնային եւ հրատապ է բանակի արդիականացումը՝ ժամանակի չափանիշներին ու պահանջներին համապատասխան: Առաջնային եւ հրատապ է ազգային ողջ ներուժի համախմբումը, որպեսզի Հայոց բանակը շուտափույթ հաղթահարի պատերազմի պատճառած աղետալի հետեւանքները, ամոքում գտնեն անդառնալի կորուստների վերքերն ու ցավերը եւ բացառվեն այնպիսի ողբերգություններ, որ ապրեցինք շաբաթներ առաջ: Հավատում ենք, որ Հայոց բանակը պիտի վերագտնի փառքի իր ճանապարհը եւ կարող լինի աննկուն ու հաղթական իրագործել իր սրբազան առաքելությունը:

Ի խորոց սրտի աղոթում ենք հայրենիքի պաշտպանության համար նահատակության պսակն ընդունած բոլոր քաջորդիների համար: Հայցում ենք Երկնավորից, որ մխիթարություն պարգեւի կորուստներից ու վշտերից բեկված հոգիներին: Թող Ամենակալն Աստված Իր պահպանությունն ու զորակցությունը շնորհի Հայոց բանակի քաջարի զինվորներին ու հրամանատարական կազմին, խաղաղություն ու բարօրություն՝ Հայաստան ու Արցախ մեր հայրենիքին եւ աշխարհասփյուռ մեր ժողովրդին»:

Մեծի Տանն Կիլիկիո Արամ Ա կաթողիկոսի ուղերձում ասվում է. «Հայոց բանակի օրը հրավեր է յուրաքանչյուր հայի համար՝ իր խոր հարգանքը ու բարձր գնահատանքը հայտնելու Հայաստանի ու Արցախի անկախության, հողային ամբողջականության ու անվտանգության պաշտպանության համար իր արյունը թափելու պատրաստ հայոց քաջ բանակին:

Արդարեւ, հայոց բանակը մեր հայրենիքի հզորության աղբյուրն է ու մեր ազգի միության առանցքը: Մեր հայրենիքին սպառնացող վտանգների դեմ մեր իրավունքներն ու արժեքները պաշտպանող եւ մեր հավաքական հավատքն ու վճռակամությունը մարմնացնող հզոր ուժն է Հայոց բանակը:

Հետեւաբար, հարկ է ավելի հզորացնել մեր բանակը՝ աղոթելով յուրաքանչյուր զինվորի անվտանգության համար ու Հայոց բանակին տալով՝ ինչ որ հրամայական է հատկապես ներկա ժամանակներում»:

Բանակի օրվա առթիվ ուղերձներ են հղել նաեւ ՀՀ երկրորդ եւ երրորդ նախագահները:

Նախագահ Ռոբերտ Քոչարյանի շնորհավորական ուղերձում ասվում է.

«Շնորհավորում եմ Հայոց բանակի օրվա առթիվ: Մեր բանակն անցնում է ամենօրյա փորձությունների միջով: Կարծես չի արվում ոչինչ, որ բանակը վերջապես ուղղի մեջքը: Ուզում եմ հավատալ, որ այս իրավիճակը շտկվելու է, եւ Հայոց բանակը վերանվաճելու է Հայաստանի եւ Արցախի անվտանգության երաշխավորի դիրքերը»:

Նախագահ Սերժ Սարգսյանի ուղերձում ասվում է, որ ցանկացած ազգ եւ պետություն դատապարտված է չգոյության, քանի դեռ չի գիտակցել, որ իր լինելության առաջին գրավականը բանակն է. չկա բանակ՝ չկա եւ չի լինելու պետություն:

«Ցանկացած բանակ դատապարտված է չգոյության, եթե այն ղեկավարում է պարտությունը հաղթանակ համարող բարոյազուրկ վախկոտը:

Օտար, թեկուզ բարեկամ, պետության բանակը երբեք չի պաշտպանի որեւէ ազգի ու պետության սահմաններն այնպես, ինչպես իր հայրենի հողը, պետությունն ու ծնողին պաշտպանող զինվորը:

Ուզում ենք հաղթող բանակ՝ չպիտի ունենանք երկիրն ու բանակը անտերության մատնած թուլամորթ, բարոյազուրկ ղեկավար:

Բանակն անպարտելի է, երբ այն առաջնորդում են ոգով արիները, պատիվ եւ ազգային արժանապատվություն ունեցողները:

Թշնամուն ծնկի բերած մեր երբեմնի հզոր բանակը միֆ համարողները միտումնավոր անարգում են հազարավոր քաջորդիների հիշատակը եւ գիտակցաբար հուսահատության մղում մեր ժողովրդին», - ասված է ուղերձում:

ՀՀ պաշտպանության նախկին նախարար, «Հայաստան» խմբակցության ղեկավար Սեյրան Օհանյանի հղած ուղերձում նշվում է, որ 2020-ի պարտությունը դավադիր էր, բանակին հարվածեցին նաեւ թիկունքից, բայց միանշանակ է եւ այն, որ առջեւում հաղթանակներ դեռ լինելու են:

«Ես վստահ եմ՝ հայկական բանակն ամենաառաջինն է ուղղելու իր վիրավոր մեջքը եւ ամուր կանգնելու է սեփական հողի, սահմանի վրա:

Հայկական բանակը վերականգնելու է իր երբեմնի ուժն ու հեղինակությունը եւ նորից անվտանգության երաշխավոր, պաշտպան է դառնալու վիրավոր Արցախի, Հայաստանի համար, բայց դա միայն բանակի խնդիրը չէ, այլ մեզանից յուրաքանչյուրի, ողջ ժողովրդի: Բանակը պաշտպանել է մեզ եւ ծանրագույն պայմաններում այսօր էլ մեր պաշտպանն է: Ամուր թիկունք, վահան դառնանք նրա համար», - ասվում է ուղերձում:

Ապառաժ

Ի զորակցություն շրջափակված Արցախի

1← Հիշյալ կոալիցիայի մասին հայտարարությունը կատարվել է հունվարի 27-ին Կապիտոլիումի բարձունքում տեղի ունեցած ասուլիսի ժամանակ: Ասուլիսին մասնակցել են ԱՄՆ կրոնական ազատության հարցերով նախկին դեսպան, սենատոր Սեմ Բրաունբեքը, ԱՄՆ-ում Արցախի ներկայացուցիչ Ռոբերտ Ավետիսյանը, Հայ դատի հանձնախմբի ներկայացուցիչներ:

Մասնակցել են նաեւ կոալիցիոն կազմակերպությունների ներկայացուցիչներ՝ մասնավորապես՝ «Միջազգային եւ կառավարական հարցերով անգլիական գրասենյակից», Բարոնուհի Քերոլայն Քոքսի կողմից հիմնադրված «ՀԱՐԹ կազմակերպությունից», «Խոցելի ժողովուրդների նախագծից», «Genocide watch»-ից, «Հունա-ամերիկյան առաջնորդության խորհրդից», «Ի պաշտպանություն քրիստոնյաների» եւ այլ կազմակերպություններից: Կոալիցիային միացած կազմակերպությունների ընդհանուր թիվը քսան է:

Իր ելույթում Հայ դատի Ամերիկայի հանձնախմբի Վաշինգտոնի գրասենյակի տնօրեն Արամ Համբարյանը արձանագրել է. «Սա բազմազան կոալիցիա է՝ նպատակ ունենալով փրկել Արցախը: Մենք ուս ուսի կանգնած ենք մեր կոալիցիայի հետ եւ համերաշխ ենք Կոնգրեսի մեր ընկերների հետ, ովքեր առաջ են մղում ապաշրջափակման օրենսդրությունը, որը նախատեսվում է ներկայացնել ԱՄՆ Ներկայացուցիչների պալատում: Այժմ, առավել քան երբեւէ, հայ եւ դաշնակից ամերիկացիները պետք է ոտքի կանգնեն եւ բարձրացնեն իրենց ձայնը»:

Ասուլիսի ընթացքում ելույթ են ունեցել, Արցախի շրջափակմանն անդրադարձել, ԱՄՆ իշխանություններից որոշակի գործողություններ պահանջել ու ադրբեջանական քաղաքականությունը դատապարտել կոնգրեսականներ Բրեդ Շերմանը, Ջուդի Չուն, Դավիթ Վալադաոն, Բարբարա Լին, Նիկոլե Մալիոտակիսը, Ջիմ Կոստան, Լու Քորեան, դեսպան Սամ Բրոունբեքը, Ռոբերտ Ավետիսյանը:

Հունվարի 27-ին Թեհրանի Սուրբ Սարգիս առաջնորդանիստ եկեղեցում տեղի ունեցավ համահավաք՝ ի զորակցություն Արցախի եւ արցախահայության՝ հազարավոր իրանահայերի մասնակցությամբ:

Հանրահավաքի ընթացքում ելույթ ունեցան Թեհրանում գտնվող՝ ԱՀ ՄԻՊ Գեղամ Ստեփանյանը, ՀՀ ԱԺ «Հայաստան» խմբակցության պատգամավոր Ասպրամ Կրպեյանը եւ ԹՀԹ Թեմական Առաջնորդ Գերշ. Տեր Սեպուհ արք. Սարգսյանը, ինչպես նաեւ հեռարձակվեց Արցախի Թեմի առաջնորդ Վրթանես եպիսկոպոս Աբրահամյանի ուղերձը:

Բողոքի վերջում ընթերցվեց մասնակիցների հայտարարությունը, որոնք պահանջեցին միջազգային ատյանների, մասնավորապես՝ Իրանի Իսլ. Հանրապետության անմիջական միջամտությունը՝ վերաբացելու Արցախն ու Հայաստանն իրար կապող Բերձորի (Լաչին) միջանցքը, ինչպես նաեւ ստեղծելու Արցախի բնիկ հայ ժողովրդին ադրբեջանական ցեղասպանական արարքներից պաշտպանելու գործիքակազմ:

Շարունակվող շրջափակումն անընդհատ ի հայտ է բերում նոր խնդիրներ

Շրջափակման հետեւանքով Արցախում առաջացած խնդիրների մասին «Ապառաժ»-ը հարցեր է ուղղել ԱՀ տեղեկատվական շտաբին:

- Ինչպե՞ս է հաջողվում հաղթահարել շրջափակման հետ կապված օրեցօր ավելացող խնդիրները: Այս առումով ի՞նչ լիազորություններ ունի օպերատիվ շտաբը:

- Օպերատիվ շտաբի լիազորությունները սահմանված են ԱՀ նախագահի համապատասխան հրամանագրով: Այս ընթացքում հաջողվել է լուծում գտնել մի շարք հրատապ հարցերի, որոնք չլուծելու դեպքում կարող էին մի շարք ոլորտներում կոլապսի հանգեցնել: Այդուհանդերձ, շարունակվող շրջափակումն աննախադեպ իրավիճակ է ստեղծում եւ անընդհատ ի հայտ է բերում նոր խնդիրներ, որոնք փորձ է արվում եղած հնարավորությունների պայմաններում կարգավորել:

- Արդարացնո՞ւմ է իրեն արդյոք կտրոնային համակարգը, հնարավո՞ր է այլ ապրանքների ձեռք բերման համար եւս կտրոններ սահմանվեն:

- Կտրոնային համակարգին անցնելու արդյունավետության գնահատականը, թերեւս, ավելի ճիշտ քաղաքացիները կարող են տալ: Կարելի է արձանագրել, որ հաջողվել է սահուն կերպով համակարգի անցումն ապահովել, դրա համար կատարվել է կազմակերպչական եւ տեխնիկական մեծ աշխատանք: Համակարգի ներդրումը որոշակի չափով մեղմել է պարենային խնդիրը, սակայն շրջափակման հետեւանքով բնակչությունը շարունակում է զրկված մնալ մի շարք կարեւոր ապրանքատեսակներ ձեռք բերելու հնարավորությունից:

Ինչ վերաբերում է կտրոնով վաճառվող ապրանքների ցանկի ընդլայնմանը, ապա, դա կորոշվի՝ հաշվի առնելով առկա հնարավորությունները:

- Քայլեր ձեռնարկվո՞ւմ են արդյոք առողջապահական տեսակետից լիարժեք, բալանսավորված սնունդ ապահովելու համար:

- Շրջափակման հետեւանքով խախտվում են Արցախի բնակչության մի շարք հիմնարար իրավունքներ, որոնցից մեկն էլ պատշաճ սնվելու իրավունքն է: Խնդիրը բավականին սուր է, եւ օպերատիվ շտաբը համապատասխան լիազոր մարմինների, մասնավորապես, առողջապահության նախարարության հետ աշխատանքներ է իրականացնում՝ ստեղծված բարդ իրավիճակում հնարավոր արդյունավետ լուծումներ գտնելու համար:

- Ինչպե՞ս է լուծվում վառելիքի խնդիրը, վտանգ կա՞, որ որոշ ժամանակ անց ներքաղաքային, միջշրջանային տրանսպորտը վառելիքի պատճառով չշահագործվի:

- Շրջափակումից անմիջապես հետո օպերատիվ շտաբի որոշմամբ գույքագրվել են եղած վառելիքի պաշարները, որոշում է կայացվել անցնել խիստ խնայողական ռեժիմի, որպեսզի հնարավոր լինի ապահովել շտապ օգնության, հատուկ ծառայությունների աշխատանքը: Ներքաղաքային, միջշրջանային տրանսպորտը աշխատում է, բայց ավելի պակաս քանակի տրանսպորտային միջոցներով: Հանրության ծառայություններ մատուցող կազմակերպությունների անխափան գործունեությունն ապահովելու նպատակով՝ խնայողական խիստ ռեժիմի պահպանումը շարունակվում է:

- Հետպատերազմյան շրջանում բավականին գումարներ են հատկացվել ջերմոցային տնտեսությունների զարգացման համար: Ծրագրվո՞ւմ է արդյոք այդ ջերմոցները պարենային խնդիրների լուծման համար օգտագործել:

- Պարենային ապահովման խնդիրն ամենակարեւոր առաջնահերթություններից մեկն է, եւ այդ տեսանկյունից գյուղատնտեսությունը եւ այս բնագավառում իրականացվող ծրագրերի արդյունավետության բարձրացումը, անկասկած, դառնում են առանցքային ուղղություններից մեկը:

Ապառաժ

Հունվարի 30-ից վերսկսվել է ուսումնական հաստատությունների դասագործընթացը

Անխափան գազամատակարարման պարագայում հունվարի 30-ից կվերսկսվի Արցախի Հանրապետության բոլոր հանրակրթական դպրոցների նախադպրոցական խմբերի (առանց սննդի, ժամը 9:00-13:00), 1-12-րդ դասարանների, արտադպրոցական (երաժշտական եւ արվեստի դպրոցներ, մարզադպրոցներ ու մանկապատանեկան ստեղծագործական կենտրոններ) եւ նախնական (արհեստագործական) ու միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների դասագործընթացը: Այս մասին հայտարարություն է տարածել ԱՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունը:

«Գազամատակարարման խափանման դեպքում կվերսկսվեն միայն 9-12-րդ դասարանների դասերը, համապատասխան պայմաններում՝ հատուկ գրաֆիկով, որի վերաբերյալ կտրամադրվի լրացուցիչ տեղեկատվություն»,- ասվում է հաղորդագրության մեջ:

ԿԳՄՍ նախարարությունը տեղեկացնում է, որ համապատասխան կառույցների կողմից տարվում են աշխատանքներ բնական գազով ջեռուցվող ուսումնական հաստատություններում ջեռուցման համակարգերը վերափոխելու ուղղությամբ:

Միաժամանակ նախարարությունը ծնողներին հորդորում է երեխաներին հագցնել տաք հագուստ:

Գազամատակարարման եւ էլեկտրամատակարարման անկայունությունը բացասաբար է անդրադառնում դպրոցական երեխաների վրա. ասվում է Արցախի տեղեկատվական շտաբի հայտարարության մեջ:

Արցախ մտնող միակ գազատար խողովակի աշխատանքը Ադրբեջանի կողմից հաճախակի խափանելու եւ էլեկտրամատակարարման հովհարային անջատումների պատճառով Արցախի մի շարք դպրոցներում ստիպված կրճատվել է դասաժամի տեւողությունը՝ դառնալով 35 րոպե, ինչը բացասաբար է անդրադառնում կրթության որակի վրա:

Արցախում հավանաբար կվերանայվի հովհարային անջատումների ժամանակացույցը

Հունվարի 9-ից ադրբեջանական վերահսկողության տակ գտնվող տարածքից անջատվել էր Հայաստանից դեպի Արցախ էներգասնուցումը: Ադրբեջանական կողմը հնարավորություն չի տալիս մասնագետներին մոտենալ եւ հասկանալ պատճառները՝ անհրաժեշտության դեպքում վթարավերականգնողական աշխատանքներ իրականացնելու համար:

Արցախը սնուցող բարձրավոլտ էլեկտրահաղորդման գծի վթարը հնարավոր է վերականգնել ժամերի ընթացքում, սակայն ադրբեջանական կողմը խոչընդոտում է. «Արցախէներգո»-ի տնօրեն:

Ըստ Անդրանիկ Խաչատրյանի՝ հաշվի առնելով, որ արդեն մոտ մեկ ամիս է՝ ադրբեջանցիները հնարավորություն չեն տալիս վթարավերականգնողական աշխատանքներ իրականացնել, դա հիմք է տալիս կասկածելու, որ արհեստական միջամտություն է եղել: Ընդ որում, վթարը բարդ հետեւանքներ չի ունեցել եւ այն կարելի է վերականգնել ժամերի ընթացքում:

Այս պահին էլեկտրաէներգիայի սպառումն ապահովվում է Սարսանգի ՀԷԿՎՆի հաշվին, բայց դրա հնարավորությունները սահմանափակ են, եւ եթե ստեղծված իրավիճակը պահպանվի, լուրջ հետեւանքներ են լինելու: Չի բացառվում, որ առաջիկայում ստիպված վերանայվի հովհարային անջատումների ժամանակացույցը՝ կախված է ջրի պաշարներից ու մասնագետների հաշվարկներից: Հովհարային անջատումները բացասական ազդեցություն են ունենում տնտեսության վրա: Անջատվել են խոշոր ընկերությունների էլեկտրամատակարարումը՝ բեռի թեթեւացման պատճառով:

Հովհարային անջատումներից բացի, օդային գծերի գերծանրաբեռնված լինելու հետեւանքով առաջացած վթարների պատճառով որոշ ժամերի մարդիկ կրկին հոսանք չեն ունենում: Էլեկտրաէներգիայի ունեցած սահմանափակ ռեսուրսների պատճառով հիվանդանոցների, գիշերօթիկ հաստատությունների, տարեցների խնամքի եւ նման այլ հաստատությունների բնականոն աշխատանքի ապահովումը նույնպես մեծ դժվարությամբ է իրականացվում: Ձեռնարկվում են այլընտրանքային միջոցներ սոցիալապես խոցելի խմբերի կենսական նվազագույն պայմանները ապահովելու համար:

ԱՀ առողջապահության նախարարության ենթակայության տակ գործող բոլոր բուժհաստատություններում պլանային վիրահատությունների դադարեցման պատճառով 560 քաղաքացի զրկվել է վիրահատվելու միջոցով առողջական խնդիրների լուծման հնարավորությունից: Ստեղծված տնտեսական բարդ իրավիճակի պատճառով նախնականորեն առնվազն 5100 մարդ կորցրել է աշխատանքը եւ եկամտի աղբյուրը:

Ավելի քան 20,800 տոննա կենսական նշանակության ապրանքներ կմակատարարվեին Արցախ, եթե չլիներ շրջափակումը, որի ընթացքում Կարմիր խաչի միջազգային կոմիտեի եւ ՌԴ խաղաղապահ զորակազմի կողմից մատակարարվել է դրա միայն չնչին մասը:

Տաթեւիկ ԱՂԱՋԱՆՅԱՆ

ՀՕՄ-ը 10 տոննա պարենամթերք է տրամադրել Արցախին

Հայ Օգնության Միությունը (ՀՕՄ) Հայաստանի եւ Արցախի Հանրապետության անկախացումից ի վեր իր աշխատանքները գլխավորաբար կենտրոնացրել է հայրենիքի հզորացման հատկապես քաջարի Արցախի ժողովրդի բարօրության համար:

Արցախի Հանրապետությունը ավելի քան հիսուն օր շրջափակման մեջ է, եւ 120.000 արցախահայերը գոյատեւման պայքար են մղում Արցախը կանգուն պահելու համար:

Խորապես գիտակցում ենք, որ դժվարին այս օրերին ճգնաժամը դիմագրավելու համար Արցախը ավելի քան երբեւէ մեր միասնության եւ օգնության կարիքն ունի:

Կարեւոր այս հրամայականի հիման վրա, ինչպես նաեւ հավատարիմ մնալով «ժողովրդիս հետ, ժողովրդիս համար» իմաստալից իր կարգախոսին, ՀՕՄ-ի Հայաստանի շրջանը շուրջ 10 տոննա պարենամթերք է հանձնել Արցախի Հանրապետության ներկայացուցչությանը:

Մենք միշտ Արցախի կողքին ենք: Օրհասական այս օրերին կոչ ենք անում ՀՕՄ-ի մեծ ընտանիքին ու համայն հայությանը՝ օգնության ձեռք մեկնել քաջարի արցախահայությանը, որը հերոսաբար կառչած է պապենական մեր հողերին եւ արթուն պահակն է արյան գնով ազատագրած իր հայրենիքին:

Արցախը մերն է եւ մնալու է հայկական:

Հայ Օգնության Միության
Հայաստանի Շրջանային վարչություն

Ներկա պահին ամեն ինչի քանակը սահմանափակ է

Արցախի շրջափակման պայմաններում ամենաառաջնային խնդիրներից մեկը շարունակում է մնալ դեղերի, մանկական կերերի, հիգիենայի պարագաների հայթայթումը:

Դեղատան աշխատող Նոնա Մարտիրոսյանի խոսքով՝ սկզբնական շրջանում, մինչեւ դեկտեմբերի 25-ը ամեն ինչ դեֆիցիտ էր, հատկապես՝ մանկական կերերը, ջերմիջեցնողները, հակաբիոտիկները:

«Դրանից հետո սկսել ենք քիչ քանակությամբ դեղորայք ստանալ, բայց ներկա պահին ամեն ինչի քանակը սահմանափակ է:

Մարդիկ դիմում են, տարբեր դեղեր են պատվիրում, եւ չենք կարողանում ժամկետ նշել, թե երբ կհասնի, կամ կհասնի՞ արդյոք»,- ասում է նա:

Դեղատանը հիմա էլ տակդիրներ չկան, միայն մանկական կերեր են, սակայն, նրա խոսքով, երեխաներին անհրաժեշտ են հավելյալ կերեր, պյուրեներ, պեչենիներ, հատկապես՝ որ բանջարեղեն ու միրգ չկա:

«Հիմնականում մանկական հակաբիոտիկներն են շատ գնում: Տարբեր հիվանդությունների դեպքում տարբեր չափաբաժնով հակաբիոտիկներ են պետք, բայց մենք միայն մի ձեւ ենք կարողացել ձեռք բերել:

Տրամադրում ենք փոխարինողները: Մանկական կերերը ստացել ենք, բայց միայն սահմանափակ տեսակներից: Շատ երեխաների համար հատուկ մոտեցում է պետք, որը չենք կարողանում ապահովել»,- ասում է Ն. Մարտիրոսյանը:

Տ. Ա.

Շրջափակման պայմաններում էլ հնարավոր է նվազագույնի հասցնել կրթությանը հասցված վնասները

ԱՀ Մարտունու շրջանի Սոսի Երկարօրյա դպրոցի համակարգող ուսուցչուհի Մարինե Հովսեփյանի խոսքով՝ Երկարօրյա դպրոցների ստեղծումը կրթության ոլորտում ամենահաջողված ծրագրերից է, որը մտցվել էր պատերազմից հետո: Իր առջեւ դնելով բազմաթիվ նպատակներ, այն լուծում է աշակերտների զբաղվածության հարցը, օգնում դասապատրաստման հարցում, վերհանում աշակերտների թաքնված կարողությունները եւ, իհարկե, աշակերտները ստանում են բալանսավորված, առողջարար սնունդ: Սակայն շրջափակման հետեւանքով աշակերտները զրկվել են նաեւ այս օգտակար նորամուծությունից:

«Շրջափակման առաջին օրերին, իհարկե, պատկերացնել չէինք կարող, որ այսքան երկար կտեւի, բայց հիմա մնում է հնարավորինս ամեն ինչ անել, որ հետագայում շատ չտուժենք այս վիճակի պատճառով, իսկ, որ ամենակարեւորն է, մեր երեխաներին հեռու պահենք «մեծերի խաղերից», նրանց անհոգ մանկությունը չխաթարվի:

Մանկապարտեզների եւ դպրոցների բացակայության պայմաններում ծնողների համար դժվարություն է ստեղծվում, աշխատող ծնողների համար կրկնակի դժվար է: Երեխաներն ամբողջ օրը տանը ձանձրանում են, իսկ ուղեղի համար լավագույն դեղամիջոցը զբաղված լինելն է»,- կարծում է Մարինե Հովսեփյանը:

Վերջին մի քանի տարում Արցախում կրթությունը շատ է տուժել արտակարգ իրավիճակների հետեւանքով:

«Համավարակ, 44-օրյա պատերազմ, իսկ այժմ արդեն նոր փորձություն արցախահայության համար՝ «բլոկադա»... Միանշանակ, յուրաքանչյուր ասպարեզ նման իրավիճակում մեծ կորուստներ է ունենում: Անշուշտ, կրթությունն անմասն չի մնում: Այս եղանակին ուսումնական պրոցեսն անցկացնելու, աշակերտների բարեկեցության հետ կապված մտահոգություններն ավելի շատ են, քան երբեւէ: Կրթության շարունակական ընդհատումներն իրենց բացասական ազդեցությունը կթողնեն, եւ կրթական աղքատության ցուցանիշը, բնականաբար, կբարձրանա, կրթական ճգնաժամը էլ ավելի կխորանա, եթե աշակերտների կրթական իրավունքի խախտումը երկար տեւի»,- ասում է ուսուցչուհին:

Շրջափակման պայմաններում էլ, Մարինե Հովսեփյանի կարծիքով, հնարավոր է նվազագույնի հասցնել կրթությանը հասցված վնասները. «Հաշվի առնելով, որ այս դժվարությունները հաղթահարում ենք հանուն մեր պետականության, անկախության պահպանման, կարծում եմ, կարելի է այլընտրանքային մեթոդներով գոնե նվազագույն վնասներով դուրս գալ այս վիճակից:

Համավարակի ժամանակ, ինչպես ամբողջ աշխարհում, այնպես էլ մեզ մոտ, անցում է կատարվել հեռավար ուսուցման, սակայն այժմ, հոսանքի հաճախակի անջատումների հետ կապված, անհնար է նույն կերպ կազմակերպել: Որպեսզի աշակերտները զրկված չլինեն ուսումնառությունից, կարելի է, օրինակ, ձայնագրել դասը, հանձնարարությունը եւ ուղարկել, վերահսկել: Համավարակի ժամանակ, հիշում եմ, բավականին մատչելի եւ բավանդակալից հեռուստադասեր, բաց դասեր էին թողարկվում. կարելի է այդ բազայից օգտվել»:

Նրա խոսքով՝ իհարկե, որքան էլ լավ կազմակերպվի այդ ամենը, երբեք չի փոխարինի դպրոցում ուսուցիչ-աշակերտ կենդանի շփմանը, բայց գոնե ուսումնական կորուստները որոշակի չափով կնվազեցվեն: Բացի այդ, աշակերտները կկենտրոնանան դրական, օգտակար գործի վրա: Ցավոք, այս ցուրտ պայմաններում երեխաներն ամբողջ օրը ձանձրանում են, իսկ հեռախոսներից կախվածությունը՝ աճում:

Տ. Ա.

Պետք է միջազգայնացնել խնդիրը

Հունվարի 19-ից Արցախում դադարեցվել է նաեւ դպրոցների եւ միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների դասագործընթացը: Պատճառը Ադրբեջանի կողմից Հայաստանից դեպի Արցախ գազամատակարարման եւ էներգամատակարարման խափանումն է:

ԱՀ Մարտակերտի շրջանի Կիչանի եւ Ղազանչիի Կարեն Առաքելյանի անվան միջնակարգ դպրոցի տնօրեն Զորայր Աբրահամյանը «Ապառաժ»-ի հետ զրույցում մտահոգություն է հայտնում, որ 2020թ. հետո կորոնավիրուսային համավարակի, պատերազմի, համավարակի նոր ալիքի, այժմ էլ շրջափակման հետեւանքով անընդհատ ուսումնական գործընթացը տուժել է, ինչը աշակերտների վրա խիստ զգացվում է:

Ճիշտ է, փորձում են հավելյալ պարապմունքներով, տեղեկություններ տրամադրելով, տարբեր միջոցառումների միջոցով ծրագիրը նորից կրկնել, որպեսզի աշակերտները գոնե կորցրածի մի մասը ստանան, վերհիշեն, բայց դա բավարար չէ: «Հունվարի 24-ին նշվում է կրթության միջազգային օրը, բայց մենք այդ օրը նույնիսկ կրթությունը դպրոցում վերականգնելու հնարավորություն չունենք: Իմ կարծիքով՝ պետք է միջազգայնացնել խնդիրը, շեշտել, որ Արցախի երեխաները զրկված են նաեւ իրենց կրթության իրավունքից: Ոչ ոք իրավունք չունի երեխային զրկելու կրթություն ստանալու իրավունքից»,- նշում է Զ. Աբրահամյանը:

Խոսելով այս օրերին ուսուցիչների եւ աշակերտների տրամադրությունների մասին՝ նա նշում է, որ բոլորը նույն հոգեվիճակում են գտնվում եւ ցանկանում են օր առաջ վերականգնված տեսնել ուսումնական գործընթացը: «Ծնողներից ենք անընդհատ դիմումներ ստանում, թե ինչ է լինելու, երբ են վերաբացվելու դպրոցները. բոլորին հուզում է այդ հարցը: Դպրոցներ կան, որոնք էլեկտրականությամբ ու գազով էին ջեռուցվում, դա հասկանալի է, բայց կարելի էր ինչ-որ ձեւով կազմակերպել, որ թեկուզ կարճ ժամով դասապրոցեսը շարունակվեր կամ փայտով ջեռուցվող դպրոցներում բնականոն հունով կազմակերպվեր: Այս հարցը բարձրաձայնել ենք, ասացին, որ քննարկում են: Երեւի ինչ-որ որոշում կլինի մոտ ժամանակներում, կոնկրետ տեղեկություն չունենք»,- նշում է տնօրենը:

Խոսելով դասերը առցանց կազմակերպելու տարբերակի մասին՝ նա տեղեկացրեց, որ այդ հարցը չեն քննարկել, քանի որ գյուղում ինտերնետ կապը թույլ է. «Հոսանքի հովհարային անջատումներից հետո էլ մի քանի ժամ, մինչեւ ինտերնետը կարգավորվում է, արդեն հաջորդ անջատման ժամն է մոտենում: Բացի դրանից, քանի որ ամեն օր տարբեր ժամերի են հոսանքն անջատում, հնարավոր չէ հստակ դասացուցակ պահել: Ունենք նաեւ տեխնիկական խնդիրներ: Բազմազավակ ընտանիքներ կան, որոնց բնակմակերեսը չի հերիքում, որպեսզի աշակերտները զբաղեցնեն տարբեր սենյակներ եւ մասնակցեն դասերին»:

Զորայր Աբրահամյանը նաեւ հավելեց, որ տրանսպորտի, վառելիքի հետ կապված խնդիր կա, որի պատճառով 2 ուսուցիչ չեն կարողանում Առաջաձոր համայնքից ժամանել աշխատանքի, իսկ մեկ աշակերտ էլ գտնվում է ՀՀ-ում եւ շրջափակման հետեւանքով չի կարողանում վերադառնալ գյուղ:

Հ.Գ. *Հարցազրույցը կայացել է հունվարի 26-ին, երկու օր անց ԱՀ ԿԳՄՍ նախարարությունը հայտարարություն է տարածել, որ անխափան գազամատակարարման պարագայում հունվարի 30-ից կվերսկսվի Արցախի Հանրապետության բոլոր հանրակրթական դպրոցների նախադպրոցական խմբերի (առանց սննդի, ժամը 9:00-13:00), 1-12-րդ դասարանների, արտադպրոցական (երաժշտական եւ արվեստի դպրոցներ, մարզադպրոցներ ու մանկապատանեկան ստեղծագործական կենտրոններ) եւ նախնական (արհեստագործական) ու միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների դասագործընթացը: Հունվարի 31-ի դրությամբ դեպի Արցախ գազամատարարումը չի ընդհատվել:*

Տաթեւիկ ԱՂԱՋԱՆՅԱՆ

Սրա սկիզբն ու վերջը չի երեւում

«Ինչպե՞ս է շրջափակումն անդրադառնում Ձեր աշխատանքի վրա»: «Շատ վատ»,- պատասխանում է Ստեփանակերտի կենտրոնական շուկայում աշխատող Ջուլիետա Գասպարյանը: «Մարդիկ սովորության համաձայն արթնանում, գործի, դպրոց են գնում, բայց ոչ մի բան չեն հասկանում այս կյանքից: Սրա սկիզբն ու վերջը չի երեւում»,- ասում է նա:

Նրա խոսքով՝ շուկան որոշ չափով աշխատում է, բայց շատ մարդիկ անգործ են մնացել, խանութները լրիվ դատարկվել են, ռեստորաններ են փակվել: «Ոչ մի բան չենք թանկացրել: Որոշ ապրանքներ՝ պանիր, ձու, գյուղից հատուկենտ բերում են, չնայած գինն էլ բարձրացել է, չենք հասցնում գնել գյուղացուց: Բոլորի տանն էլ ուտելիքի որոշ պաշար կա: Խնդիրը նրանում է, որ երեխան միրգ, բանջարեղեն չի ուտում»,- շարունակում է Ջուլիետան:

1993թ. Քարվաճառի ազատագրման մարտերից հետո Ջուլիետան իր ամուսնուն չի տեսել, վերջինս համարվում է անհայտ կորած: 1996-ից շուկայում աշխատող Ջուլիետան նշում է, որ այն ժամանակ էլ

դժվարություններ կային, ապրանքներ դժվարությամբ էին գտնում, սերտ կապեր չկային դրսի հետ: «Բայց առաջին պատերազմից հետո մարդիկ լավ են ապրել, թեկուզ հարցը լրիվությամբ չի լուծվել, թեկուզ ընտանիքները դժվարություն են քաշել, զոհեր են տվել, բայց ցավի հետ համակերպված լավն ենք տեսել, պայքարել ենք: Հիմա մի տեսակ թեւաթափ ենք, հուսահատված: Պահի տակ ուզում ենք լավը մտածել, բայց լավ բան չենք տեսնում, վախենում ենք «հետո»-ից»,- նշում է նա:

Ասում է՝ Ռուբեն Վարդանյանի հետ որոշ հույսեր էինք կապում, հիմա տարբեր բան են ասում մարդիկ: Արդեն չգիտես՝ լա՞վը մտածես, թե՞ վատը: «Ես մտածում եմ, որ եթե թուրքերը նրա դեմ են, նշանակում է՝ թուրքերի կողմից չէ: Չգիտեմ, մեզ համար բաներ ենք հորինում ու հավատում, մեր կյանքից մենք էլ չենք բան հասկանում»,- ասում է Ջուլիետան:

Տ.Ս.

Թոնրատունն աշխատում է ծանրաբեռնված գրաֆիկով

«Շինամաչ» թոնրատան տնօրեն Գարեգին Գեւորգյանը «Ապառաժ»-ի հետ զրույցում նշեց, որ թոնրատունն աշխատում է ծանրաբեռնված գրաֆիկով՝ գիշերվա ժամը 4-ից մինչեւ անգամ ցերեկվա 4-ը, պարզապես այս ընթացքում էլեկտրականության հովհարային անջատումները հաճախ համընկնում են թոնրատան հիմնական աշխատաժամանակի հետ եւ խնդիրներ առաջացնում՝ կապված անհրաժեշտ հացի քանակի ապահովման հետ:

«Ալյուրը եւ անհրաժեշտ մյուս ապրանքները կան, եւ փորձում ենք աշխատանքները կազմակերպել հնարավորինս արդյունավետ: Ալյուրի ձեռք բերման համար դիմում ենք Օպերատիվ շտաբին: Նրանք տրամադրում են անհրաժեշտ քանակը, իսկ տեղափոխումն իրականացնում ենք մեր մեքենաներով»,- նշել է Գ. Գեւորգյանը:

«Շինամաչ» թոնրատունը օրական հացնում է թխել տարբեր չափերի 500-ից մինչեւ 700 հաց, որն ավելի շատ է, քան մինչեւ շրջափակումն էր: Տնօրենի խոսքով՝ հերթեր չեն գոյանում, կամ շատ քիչ են լինում:

«Այս պահին աղյուսներով նոր վառարան ենք կառուցում, որն աշխատում է հոսանքով, սակայն հացերը թխում է հավասարաչափ, ավելի արագ եւ ավելի հարմար է լինելու աշխատողների համար»,- ասել է Գ. Գեւորգյանը:

Կապված աշխատանքային ծանրաբեռնվածության հետ՝ թոնրատունը նաեւ նոր աշխատող է ընդունել, որպեսզի կարողանան ապահովել սպառողներին անհրաժեշտ քանակությամբ հացով: Պարենամթերքի բացակայության պայմաններում՝ ամբողջ ծավալով աշխատելուց զրկվել է նաեւ ռեստորանային բիզնեսը:

Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Մանկապարտեզների աշխատողները սպասողական վիճակում են

Արցախը Հայաստանին կապող միակ ճանապարհը Ադրբեջանի կողմից արգելափակվելու պատճառով հունվարի 9-ից նախադպրոցական հաստատությունների, հանրակրթական դպրոցների նախադպրոցական խմբերի եւ դպրոցների երկարօրյա ռեժիմով աշխատանքը սննդի ոչ բավարար մատակարարման պատճառով ժամանակավորապես կասեցվել է:

Շրջափակման պայմաններում սննդի սրացող սղության պատճառով՝ փակվել է 41 մանկապարտեզ, 56 նախադպրոցական խումբ, 20 երկարօրյա ուսումնական հաստատություն: Գազի մատակարարման վերականգնմամբ պայմանավորված՝ հունվարի 30-ին ԱՀ ԿԳՄՍ նախարարության որոշմամբ վերսկսվել է Արցախի Հանրապետության բոլոր հանրակրթական դպրոցների նախադպրոցական խմբերի (առանց սննդի, ժամը 9:00-13:00) դասագործընթացը:

Հայ Օգնության Միությունը Արցախում չորս «Սոսե» մանկապարտեզներ ունի, որոնք նույնպես շրջափակման հետեւանքով առաջացած խնդիրների պատճառով, հանրապետության մյուս մանկապարտեզների նման, այս օրերին չեն գործում:

«Սոսե» մանկապարտեզները համակարգող Արտեմիս Գրիգորյանի խոսքով՝ այս օրերին մանկապարտեզների աշխատողները սպասողական վիճակում են, ներքին ծրագրերով են զբաղվում, որպեսզի աշխատանքները վերսկսելուց հետո գործն առաջ գնացած լինի:

«Պահեստներում մաքրություն ենք անում, ներքին աշխատանքներ կատարում: Աշխատել չենք կարողանում, քանի որ գազով էին տաքացվում սենյակները, նաեւ սննդի խնդիր կա»,- ասում է Արտեմիս Գրիգորյանը՝ հավելելով, որ շրջափակման հետեւանքով վերանորոգման մեջ գտնվող Ակնաբերդի մանկապարտեզում շինարարական աշխատանքները դադարեցված են:

Տ.ԱՂԱՋԱՆՅԱՆ

Փորձում ենք հարմարվել նոր իրականությանը

Հնարավորինս փորձում ենք հարմարվել նոր իրականությանը, բայց խնդիրները շատ են, բազմաթիվ ու բազմապիսի՝ կապված դեղորայքի ներմուծման, դրանց քանակի, բազմազանության հետ: Այս մասին «Ապառաժ»-ի հետ զրույցում նշել է «Արեւիկ» մանկական բուժմիավորման գործադիր տնօրեն Կարեն Մելքումյանը՝ խոսելով շրջափակման հարուցած խնդիրների մասին: «Ձմեռվա սեզոնը հանդիսանում է սուր շնչառական վարակների ծաղկման շրջան, եւ հիվանդները միշտ ավելի շատ են լինում: Դեղորայքը հասնում էր մայր Հայաստանին կապող միակ ճանապարհով, իսկ մեր պաշարները, նախարարության պաշարները, նաեւ Կարմիր խաչի կողմից բերված դեղորայքը չի կարող լրիվ ծավալն ապահովել: Հիմա մաքսիմալ տնտեսման շրջանում ենք: Երկրորդ խնդիրը կապված է էներգակիրների պակասի հետ՝ բնական գազ, էլեկտրականություն: Հիվանդանոցի կաթսայատունն աշխատում է միայն բնական գազով: Եթե նույնիսկ գազը կա, այն աշխատացնելու համար հոսանք է պետք: Մի խնդիր է, երբ հոսանք չի լինում, եւ երկրորդ խնդիրն է, որ հոսանքի առկայության պարագայում այդ ծանրաբեռնվածության դեպքում չի ապահովում իր հզորությունը»,- ասում է տնօրենը: Արեւային ջրատաքացուցիչները մեծապես խնայում են էլեկտրաէներգիան, սակայն հոսանքի բացակայության պարագայում գեներատորն աշխատում է գերծանրաբեռնվածությամբ, իսկ օգտագործվող վառելիքը հիմա խնդիր է:

Ստեղծված իրավիճակում ստիպված նույն հիվանդություններով, լավացման շրջանում գտնվող երեխաներին տեղավորում են մի պալատում՝ հասկանալով հանդերձ, որ բոլորը ցանկանում են առանձին պալատներում լինել: Նոր գրաֆիկ են սահմանել՝ կրճատելով այն ծառայությունների աշխատաժամանակը, որը հնարավոր է կրճատել կամ տեղափոխել այլ ժամանակ:

«Պլանային վիրահատությունները դադարեցված են, բայց դրանց ենթակա երեխաների վիճակը ժամանակի ընթացքում վատթարանում է: Այդ պատճառով ռիսկային խմբում գտնվողներին հնարավորության դեպքում պետք է վիրահատել: Ում հնարավորություն ունեցանք հետաձգել, առանց իրենց առողջական վիճակին վնաս հասցնելու, հետաձգում ենք»,- նշում է Կ. Մելքումյանը:



Նրա խոսքով՝ այս պահի դրությամբ վերակենդանացման եւ նորածնային բաժանմունքում 10 երեխա է բուժում ստանում, բայց շտապ ՀՀ տեղափոխման ցուցումով չկան: Շրջափակման օրերին հիվանդանոցից ռեանիմոբիլով «Մուրացան» բժշկական կենտրոն է տեղափոխվել ծանր վիճակում գտնվող 4 ամսական մեկ երեխա: Նրա մոտ հայտնաբերվել էր լեշմանիոզ հիվանդությունը: Կարեն Մելքումյանի խոսքով՝ երեխան հիմնական հիվանդությունից բացի՝ ուղեկցող այլ խնդիրներ ունի: Հիմնական հիվանդությամբ բուժումը շարունակում է, բայց պետք է նաեւ սրտի հետ կապված խնդիրների համար բուժում ստանա:

Տաթեւիկ ԱՂԱՋԱՆՅԱՆ

Ռեստորանի հաճախորդների թիվը կրճատվել է

«Կառավարությունը չի կարողանում օժանդակել, ոչ մի ձեւ հարցը չի լուծվում, եւ ինչ մնացորդում ունեինք՝ դրանով ենք աշխատում: Եղել է հանդիպում պետնախարարի հետ, սակայն որեւէ առաջարկ կամ լուծում չի հնչել, միայն ներկայացվել է իրավիճակը»,- ասել է Հ. Ավանեսյանը:

Նրա խոսքով՝ այս պահին կրճատումներ չեն նախատեսում, իրենց միջոցներից են ապահովում աշխատողների վարձատրությունը:

«Հույսներս պետությունն է: Եթե պետական ապարատին կարող-

ղանում է ապահովել, ապա հույս ենք պահում, որ մասնավոր սեկտորին եւս կկարողանան ապահովել»,- նշել է Հ. Ավանեսյանը:

Ռեստորանն այս պահին աշխատում է, սակայն մենյուի 80 տոկոսը չկա: Տեղական մթերքներով աշխատելու պարագայում՝ կարող են ապահովել միայն մենյույում առկա կերակրատեսակների 20 տոկոսը:

«Երկար ժամանակ շարունակվելու դեպքում՝ կարծում եմ կփակվի, սակայն հույս ենք պահում, որ շուտով կբացվի ճանապարհը եւ կկարողանանք վերականգնել մեր առօրյա գործունեությունը»,- եզրափակել է Հ. Ավանեսյանը:

Ի տարբերություն «Արցախ»-ի, «Բաժակ» ռեստորանի տնօրեն Հայկ Ավանեսյանի խոսքով՝ շրջափակումից հետո գրեթե հաճախորդների թիվը չի նվազել, սակայն խնդիրները միանման են. մթերքները չեն բավարարում, ընդհանուր աշխատանքները նվազել են:

«Հաճախորդները գալիս են, բայց չենք կարողանում տալ այն, ինչ-որ առաջ էինք տալիս: Փորձում ենք անել առավելագույնը, տեղական մթեքները հնարավորության դեպքում օգտագործելով՝ աշխատել: Սննդամթերքի մասով արտոնությունները շատ քիչ են: Առայժմ միայն 12լ ձեթի կտրոն են տրամադրել, մնացածը հայթայթում ենք՝ որտեղից կարողանում ենք: Որեւէ այլ արտոնություններ չկան: Այնպիսի տպավորություն է, որ մոռացել են, որ մենք էլ ունենք աշխատողներ, պետք է աշխատենք, որպեսզի կարողանանք այդ 12 աշխատողներին ապահովել աշխատանքով»,- ասել է Հայկ Ավանեսյանը:

«Բաժակ»-ում եւս կրճատումներ չեն եղել, իսկ տնօրենն էլ հույս հայտնեց, որ չեն էլ լինի: «Մինչեւ վերջ գնալու ենք, միայն թեյ ենք տալու, բայց ապահովելու ենք նրանց աշխատանքը: Ես չեմ պատկերացնում սրանից հետո մեր տնտեսությունն ինչպես է ոտքի կանգնելու: Ես իմ անձնական պահուստային ֆոնդից վճարում եմ իմ աշխատողներին, շատ ժամանակ օգուտով չենք աշխատում, իմ գրպանից եմ գումար ներդնում, սակայն շատ երկար չենք կարող այսպես դիմանալ: Պետնախարարի հետ հանդիպում է եղել, սակայն ոչ մի արդյունք չկա, պարզապես զրույց է եղել: Ամեն դեպքում, ես չեմ կարծում, որ մեր պետությունն այս պահին կարող է ապահովել փոխհատուցում՝ այն դեպքում, երբ հարկեր չենք վճարում: Ֆինանսի խնդիր կա: Ես կարծում եմ՝ եւս մեկ ամիս շարունակվելու դեպքում մեր տնտեսությունն ի վիճակի չի լինելու վերականգնվել»,- նշել է Հ. Ավանեսյանը:

Ճանապարհի փակ լինելու պատճառով Արցախը զրկված է նաեւ հյուրեր ընդունելու հնարավորությունից, ինչի արդյունքում հյուրանոցները չեն կարողանում իրենց գործունեությունը ծավալել:

«Արմենիա» հյուրանոցի մենեջեր Ալինա Աղաջանյանը նշել է, որ հյուրանոցային ծառայությունից օգտվողներ չկան:

«Իհարկե, մեզ վրա նույնպես շրջափակումն իր բացասական ազդեցությունն է ունեցել: Կան հյուրեր, որոնք ճանապարհի փակ լինելու պատճառով մնացել են հյուրանոցում եւ չեն կարողանում վերադառնալ, ու այսօրվա դրությամբ այս իրավիճակի գերիներն են համարվում: Շրջափակման հետեւանքով խնդիրներ ունենք՝ սննդի մատակարարման եւ էներգոապահովության խնդիրներ: Էներգիայով ապահովման հարցը լուծվում է գեներատորի միջոցով, բայց այս պահին նաեւ դիզելային վառելիք գտնելու խնդիրը կա: Սննդի ձեռք բերման համար մենք, ինչպես բոլորը, գրավոր ձեւով դիմում ենք համապատասխան մարմիններին՝ ապրանքներ ստանալու համար, հնարավորության սահմաններում, ինչպես ստացվում է»,- ասել է Ա. Աղաջանյանը:

Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

30 000 երեխաներ զրկվել են կրթություն ստանալու հնարավորությունից

Մենք այն երջանիկներից ենք, ովքեր ունեցել են ուրախ ու անհոգ մանկություն: Ճիշտ է, չունեինք խաղալիքներ, Արցախյան առաջին պատերազմից հետո եւս սոցիալ-տնտեսական վիճակը շարունակում էր ծանր մնալ, սակայն մենք մեզ անհոգ ենք զգացել ու երջանիկ, որովհետեւ հնարավորություն ենք ունեցել դպրոց հաճախելու, խաղալու ու շփվելու մեր հասակակիցների հետ:

Հետո եկավ 2020-ը, երբ խանութները լցված են տարատեսակ խաղալիքներով, տարատեսակ էլեկտրոնային սարքավորումներով, կան զվարճանքի վայրեր, հարմարավետ դպրոցներ: Սակայն 2020թ. սկսված կորոնավիրուսի համավարակը, հետո 44-օրյա պատերազմը, այնուհետեւ Արցախի շրջափակումը զրկել են Արցախի 30 000 երեխաներին կրթություն ստանալու իրավունքից, զրկել են իրենց ուրախ խաղերից, կանգնեցրել սովի ենթարկվելու վտանգի առջեւ:

Ադրբեջանի կողմից վարվող ցեղասպանական քաղաքականությանը, ցավոք սրտի, զոհ են գնում նաեւ մեր երեխաները:

Ադրբեջանի կողմից գազի անջատման, հոսանքի չբավարարման, սնունդ չլինելու պատճառով Արցախի 30 000 երեխաներ զրկվել են կրթություն ստանալու հնարավորությունից, իսկ ստեղծված բարոյահոգեբանական վիճակը շատ բացասաբար է անդրադառնում նրանց վրա:

Խոսելով շրջափակման մասին, Մարթա Չիլինգարյանը՝ Մարտակերտի շրջանի Վանք գյուղից, ով այդ հազարավոր երեխաներից մեկն է, նշում է.

«Արցախի շրջափակումը կարծես թե կանգնեցրել է մեր կյանքի ընթացքը: Փողոցներում այնքան քիչ ենք հանդիպում մեքենաների: Դպրոց շտապող երեխաներ էլ չկան, որովհետեւ անորոշ ժամանակով դադարեցվել է դասագործընթացը: Այլեւս խանութներում չենք կարողանում գտնել մեզ անհրաժեշտ պարագաները, նույնիսկ դեղորայքի պակաս կա: Փակ միջանցքի երկու կողմում շարունակում են կիսված ընտանիքներ մնալ: Շարունակվող շրջափակմանն ուղեկցում են գազի եւ հոսանքի անջատումները: Բնակարանները զրկվում են ջեռուցումից, հոսանքն էլ եղած դեպքում խնայողաբար ենք օգտագործում: Շարունակվող շրջափակման մեջ հասկացել են, որ մարդիկ շատ բարի են, օգնում են միմյանց դժվարին պահերին, եւ հենց այդ ամենի միջոցով էլ մենք կկարողանանք հաղթահարել ներկայիս ճգնաժամային իրավիճակը»:

Շրջափակումից հետո Մարթան ավելի զգոն է դարձել, ավելի կարեկից ու սկսել է ավելի շատ արժեւորել կյանքի ամեն մի վայրկյանը: Նա հասկացել է, որ բոլորի կողմից սիրված Ամանորը ճոխ սեղաններով ու հրավառությամբ անցկացնելուց բացի, նախ եւ առաջ՝ ընտանեկան տոն է, երջանկություն, եւ բոլորս պետք է սկսենք արժեւորել մեր ընտանիքի հետ ապրած յուրաքանչյուր վայրկյան, որովհետեւ փակված ճանապարհի այն կողմում հարյուրավոր երեխաներ ու ծնողներ կան բաժանված միմյանցից:

Մարթան դպրոցից ամենաշատը կարոտում է աշխարհագրության դասերն ու ընկերներին:

«Դպրոցը մեզ տալիս է կրթություն, որն էլ կարեւոր է հատկապես մեր ապագայի համար: Իսկ ներկայիս իրավիճակում մենք, համոզվում ենք, որ ավելի ու ավելի շատ պետք է գինվենք գիտելիքներով, որպեսզի կարողանանք պայքարել մեր իրավունքների համար, որոնք անտեսվում են աշխարհի հազարավոր գիտնականների կողմից»,- ասում է Մարթան:

Չնայած շրջափակմանը եւ դպրոց չլինելուն, Մարթան չի սիրում նստել տանը եւ տխրել, որովհետեւ այն համոզմունքն ունի, որ յուրաքանչյուր մութ սենյակում կարելի է լույս գտնել: Պարզապես ցանկություն է պետք:

«Օրվա մեծ մասը տրամադրում եմ ընթերցանությանը, նաեւ ստեղծագործում եմ, գրում բանաստեղծություններ, կամ էլ շարադրում այն, ինչ զգում եմ այդ պահին: Սկսել եմ նաեւ ուսումնասիրել տարբեր լեզուներ եւ ավելի խորացնել գիտելիքներս»,- ասում է Մարթան:

Նա բազմաթիվ նպատակներ ունի, սակայն չի սիրում դրա մասին խոսել:

«Ես սիրում եմ դրանց հասնելուց հետո խոսել այդ մասին: Ինչ Նպատակ էլ որ ունեմ, միանշանակ կապված է Արցախի անկախացման, ճանաչման եւ զարգացման հետ: Այն գիտելիքների պաշարը, որը ես ունեմ եւ պետք է դեռ ավելացնեմ, փոխանցելու եմ Արցախի ապագա սերունդներին, որովհետեւ կյանքը շարունակվում է, եւ սերունդների այս հերթափոխում մենք պետք է արժանի հետնորդ եւ նախնի լինենք»,- նշել է Մարթա Չիլինգարյանը:

Քաղաք Մարտունու Մեսրոպ Մաշտոցի անվան 9-րդ դասարանի աշակերտուհի Մերի Ադամյանը նշում է, որ մեզ պատուհասած եւ արդեն մեկ ամսից ավել շարունակվող աղետը մի օր պիտի ավարտվի, որովհետեւ արցախցին պայքարող է, նրա կամքին հնարավոր չէ բռնանալ, եւ արդար է, որովհետեւ այս հողը հայկական է եւ այստեղ ապրելու իրավունքը հայերին է պատկանում:

«Ես վստահ եմ, որ եթե այս ամենը շարունակվի թեկուզ տարիներ էլ՝ մենք կդիմանանք, կհաղթահարենք, քանզի մենք հայ ենք եւ Աստծո ընտրյալ ազգն ենք, իսկ Աստծո կամակատարներին հաղթել չի լինի, քանի որ մեզանում հավատ կա, իսկ մեր հոգին պայքարող ու ազատ է: Մենք պատրաստ ենք ցանկացած զրկանքներ ապրելու, միայն թե պաշտպանենք ու հայկական պահենք այն հողը, որի համար հազարավոր երիտասարդներ իրենց կյանքն են տվել»,- ասում է Մերին:

Մերին շատ երազանքներ ուներ մինչեւ շրջափակումը, դրանք այսօր էլ ունի իր մտքում մտապահած, սակայն չի բարձրաձայնում, որովհետեւ այսօր անհատական երազանքների մասին ոչ ոք չի խոսում, բոլորը մեկ հավաքական նպատակ ունեն՝ հաղթահարել այս դժվարություններն ու սեփական հողում ապրել ազատ ու երջանիկ:

«Իմ բազմաթիվ երազանքների կողքին՝ իմ ամենամեծ երազանքը Արցախում՝ իմ հողում ապրելն է»,- նշում է նա:

Նա կարոտում է իր հարազատ դպրոցը, դասընկերներին, ուսուցիչներին, եւ շատ անհամբեր է, թե երբ պիտի սկսեն նորից դպրոց գնալ, գիտելիք ստանալ, իսկ մինչ այդ փորձում է իր օրերը հետաքրքրությամբ լցնել. ինքնակրթությամբ է զբաղվում, գրքեր է կարդում, ֆիլմեր դիտում: Նա համոզված է, որ դպրոցում ստացած գիտելիքներն են օգնում այս դժվարին իրավիճակում, եւ պետք է ամեն պարագայում շարունակել կրթվել ու զարգանալ:

17-ամյա Արսեն Գեւորգյանն Արցախի ապագա զինվորն է, նրա պաշտպանը: Նա համոզված է, որ Ադրբեջանի կողմից Արցախի շրջափակումը նպատակ ունի Արցախը հայաթափելու, սակայն կարծես թե լավ չեն ճանաչում արցախցիներին:

«Նրանք չեն հասկանում, որ շրջափակված Արցախում ոչ ոք միտք չունի լքել իր հայրենի հողը: Հակառակը, այս դժվարությունները մեզ միասնական են դարձնում, ուժ տալիս եւ էլ ավելի մեծացնում թշնամու հանդեպ ունեցած վրեժի մեր զգացումը»,- նշում է Արսեն Գեւորգյանը:

Արսենն այն հարյուրավորներից մեկն է, ով ոչ միայն զրկվել է կրթություն ստանալու իրավունքից, այլեւ արդեն 44 օր է, ինչ բաժանված է իր մայրիկից, ով գտնվում է երեւանում:

«Շրջափակումից հետո կյանքս 180 աստիճանով փոխվել է: Մայրս մնացել է Երեւանում եւ չի կարողանում վերադառնալ: Տան հիմնական գործերը ես եմ անում: Ամբողջությամբ փոխվել է աշխարհայացքս: Այս դժվարին պահերին մենք հասկացանք, որ միջազգային հանրությունը չի օգնում մեզ, որովհետեւ տարբեր երկրներ մեզնից որեւէ շահ չունեն»,- ասում է Արսենը:

Արսենը նույնպես կարոտում է իր դպրոցը, ուսուցիչներին, ընկերներին, որոնց հետ հնարավորություն ուներ դպրոցում շփվելու: Նա նաեւ լավ նկարում է, եւ նպատակ ունի մինչեւ բանակ գնալը իր անհատական ցուցահանդեսը կազմակերպել, որի հիմնական թեման Արցախը կլինի, իսկ զորացրվելուց հետո էլ նպատակ ունի դիզայներ դառնալ եւ իր փոքրիկ ներդրումն ունենալ Արցախը շենացնելու եւ ճանաչելի դարձնելու գործում:

«Այս օրերին, արդեն նշեցի, որ հիմնականում տնային աշխատանքներով եմ զբաղված, իսկ եթե ազատ ժամանակ եմ գտնում՝ նկարում եմ: Եթե հասցնեմ, մեր իրավիճակի հետ կապված նկար եմ նկարելու»,- նշում է Արսենը:

Վահագն ԽԱՉԱՏՐՅԱՆ

Արցախի շրջափակումը պարտադրում է ավելի ռացիոնալ օգտագործել առկա ռեսուրսները

Խոսում են արցախցի ուսանողները

Արցախի պետական համալսարանի ուսանողները Արցախի պետական համալսարանի դոցենտ, տ.գ.թ. Սուրեն Պարսյանի հանձնարարությամբ «Արցախի շրջափակման ընթացքում ի հայտ եկած տնտեսական խնդիրները եւ դրանց լուծման ուղիները» թեմայով հոդվածների շարք են պատրաստել: Ստորեւ ներկայացնում ենք Արցախի պետական համալսարանի տնտեսագիտության ֆակուլտետի «Կառավարում» բաժի մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանողներ Անի Ազատյանի եւ Վահագն Խաչատրյանի հոդվածները:

2022թ. դեկտեմբերի 12-ին ադրբեջանցիների կողմից փակվել է Արցախի Հանրապետության հայկական վերահսկողության ներքո գտնվող տարածքը Հայաստանին կապող միակ ճանապարհը՝ Շուշի-Քարին տակ խաչմերուկի հատվածում, որը գտնվում է Ռուսաստանի Դաշնության զինված ուժերի խաղաղապահ առաքելություն ստանձնած զորքերի պատասխանատվության գոտում:

Շրջափակման հետեւանքով Արցախում ստեղծվել է հումանիտար ճգնաժամ, դադարեցվել է պարենի, վառելիքի եւ դեղորայքի կանոնավոր մատակարարումները, առաջացել է մի շարք առաջին անհրաժեշտության ապրանքների պակասուրդ, այդ թվում՝ մանկական սննդամթերքի եւ որոշ ջերմիջեցնող դեղերի:

Արցախը Հայաստանին կապող միակ ճանապարհի արգելափակման հետեւանքով փաստացի շրջափակված են Շուշիի շրջանի Մեծ Շեն, Հին Շեն, Եղծահող եւ Լիսագոր համայնքները: Անհնարին է դարձել դեպի այդ համայնքներ սննդամթերքի, մասնավորապես հացի եւ ալյուրի, ինչպես նաեւ առաջին անհրաժեշտության այլ ապրանքների մատակարարումը:

Արցախի առողջապահության նախարարությունը հայտնել է, որ Ադրբեջանի կողմից Արցախը Հայաստանի հետ կապող ճանապարհի արգելափակման հետեւանքով առողջական ծանր խնդիրներ ունեցող Արցախի քաղաքացիների տեղափոխումը Երեւան՝ սկզբնական շրջանում անհնար էր, այնուհետեւ իրականացվել է Կարմիր խաչի միջնորդությամբ: Դեկտեմբերի 14-ից Արցախի բուժհաստատություններում ժամանակավորապես դադարեցվել են պլանային վիրահատությունները, ինչի հետեւանքով շուրջ 430 քաղաքացի զրկվել է վիրահատվելու հնարավորությունից (16.01.2023 թ. դրությամբ):

Ադրբեջանի կողմից Արցախը Հայաստանին կապող ճանապարհի եւ գազամատակարարման պարբերական արգելափակման հետեւանքով Արցախի Հանրապետությունում առաջացել է բենզինի, դիզվառելիքի, հեղուկ եւ սեղմված գազի պակաս: Էլեկտրաէներգիայի մատակարարման հարցում ծագած դժվարությունները սպառնում են առավել խորացնել վառելիքի պակասից ծագած ճգնաժամը: Արդեն մեկ ամսից ավել է՝ շրջափակված Արցախում բենզալցակայաններն աշխատում են հատուկ կարգով, որը մշակել է օպերատիվ շտաբը: Վառելիքի գներում փոփոխություններ չեն գրանցվել, սակայն փոխվել է գնման ընթացակարգը. պարտադիր պայման է համապատասխան կտրոնի առկայությունը:

Արցախը Հայաստանին կապող մայրուղու փակվելուց անմիջապես հետո մայրաքաղաք Ստեփանակերտում հասարակական տրանսպորտը սկսել է գործել արտակարգ ռեժիմով. սպասարկող ավտոբուսների թիվը կրճատվել է 50 տոկոսով: Պատճառը վառելիքի պակասն է:

Տաքսի ծառայություններ մատուցող ընկերությունները շրջափակման պատճառով ստիպված են ուղեւորափոխադրումներն իրականացնել միայն Արցախի տարածքում, սակայն վառելիքի պակասը նրանց համար նույնպես օրհասական խնդիր է:

Հունվարի 9-ից ադրբեջանական վերահսկողության տակ գտնվող տարածքից անջատվել է Հայաստանից դեպի Արցախ էներգասնուցումը: Ադրբեջանական կողմը հնարավորություն չի տալիս մասնագետներին՝ մոտենալ եւ հասկանալ պատճառները, անհրաժեշտության դեպքում՝ վթարավերականգնողական աշխատանքներ իրականացնել: Արցախի 120 հազար բնակչությունը փաստացի զրկված է անխափան էներգամատակարարման հնարավորությունից: Հանրապետությունում ներկայումս էլեկտրաէներգիայի պահանջարկը բավարարվում է միայն ներքին՝ խիստ սահմանափակ ռեսուրսների հաշվին: Հունվարի 10-ից հանրապետությունում իրականացվում են հովհարային անջատումներ:

Խիստ սահմանափակ ռեսուրսների պայմաններում, բնակչության նվազագույն էներգետիկ կարիքները հնարավորինս երկարաժամկետ կտրվածքով ապահովելու նպատակով, Արցախի կառավարությունը հակաճգնաժամային քայլեր է ձեռնարկում՝ էլեկտրաէներգիայի արտադրման եղած պաշարները խնայելու ուղղությամբ:

Ստեղծված տնտեսական բարդ իրավիճակի պատճառով նախնականորեն առնվազն 4100 մարդ կորցրել է աշխատանքը եւ եկամտի աղբյուրը: (20.01.2023 թ. դրությամբ):

Բերձորի միջանցքի փակման հետեւանքով Արցախում բազմաթիվ ընկերություններ փակվել են: Տեղական հումքով աշխատող որոշ կազմակերպություններ դեռ աշխատում են, բայց ներկրվող օժանդակ նյութերի պակասն արդեն զգացվում է: Որոշ ընկերությունների արտադրանքի սպառման հիմնական շուկան Հայաստանի Հանրապետությունն ու Ռուսաստանի Դաշնությունն են, եւ ստեղծված իրավիճակում տնտեսավարող սուբյեկտները ֆինանսական խնդիրներ ունեն: Նրանք մտածում են արտադրանքը տեղական շուկայում իրացնելու ուղղությամբ, սակայն ներկայիս պայմաններում բնակչությունը հակված է հիմնականում առաջին անհրաժեշտության ապրանքների ձեռքբերմանը:

Առավել ծանր իրավիճակում են հայտնվել ապրանք ներկրող ընկերությունները:

Արցախի շրջափակումը ծանր հարված է հասցրել հանրապետության տնտեսավարող սուբյեկտներին: 726 տնտեսավարող սուբյեկտ (ընդհանուրի 17,7%-ը) շրջափակման պայմաններում աշխատելու անհնարինության պատճառով կասեցրել են իրենց գործունեությունը (16.01.2023 թ. դրությամբ):

Միակ միջանցքի փակումը Արցախում պարենային խնդիրներ է առաջացրել: Շրջափակմանը հաջորդած 1-2 շաբաթվա ընթացքում փակվեցին միրգ-բանջարեղենի խանութները. ապրանք չեն ստանում: Սկզբում վերջացան լայն սպառման ապրանքները, այնուհետեւ՝ գրեթե ամեն ինչ: Խանութների դարակները գրեթե դատարկ են:

Դեղատներում շատանում են հերթերը, բացակայում են ամենապահանջված դեղամիջոցները: Դեղատներում կա ջերմիջեցնող դեղերի, ցավազրկողների, հակաբիոտիկների, մանկական կերերի եւ տակդիրների պակասություն:

Ավելի քան 14400 տոննա կենսական նշանակության ապրանքներ կմակատարարվեին Արցախ, եթե չլիներ շրջափակումը, որի ընթացքում Կարմիր խաչի միջազգային կոմիտեի եւ ՌԴ խաղաղապահ զորակազմի կողմից մատակարարվել է դրա միայն չնչին մասը:

Առկա պարենային ապրանքները առավելագույնս համաչափ բաշխելու համար Արցախում ներդրվել է կտրոնային համակարգ: Արցախցիները տրամադրված կտրոններով 2023 թվականի հունվարի 20-ից կարող են գնել մեկ լիտր ձեթ ու մեկական կիլոգրամ բրինձ, մակարոն, հնդկաձավար ու շաքարավազ:

Կտրոնային համակարգի անհրաժեշտության մասին արցախցիները խոսում էին շրջափակման առաջին իսկ տասնօրյակում, երբ խանութների դարակները դատարկվեցին, իսկ կառավարության պահուստներից տրամադրվող մթերքը շատ արագ անհետանում էր վաճառասեղաններից, մթերք հասնում էր նրան, ով ծանոթ խանութպան ուներ կամ էլ ճարպկորեն հետեւում էր, թե որ խանութը որ պահին ինչ ստացավ:

Այսօր հերթերը դատարկ խանութներից տեղափոխվել են բանկոմատների ու տերմինալների մոտ, մարդիկ ոչ միայն աշխատավարձը, կենսաթոշակն էլ միանգամից հանել չեն կարող, քանի որ կանխիկի դրամաշրջանառության հետ կապված խնդիրներ են առաջացել: Բնակչության կողմից մեծ ծավալի գումարի կանխիկացումը նվազեցրել էր կանխիկի դրամաշրջանառությունը: Խնդրի կարգավորման ուղղությամբ օպերատիվ շտաբը միջոցներ է ձեռնարկել, եւ մտցվել

են որոշակի փոփոխություններ: Մասնավորապես, Արցախի Հանրապետությունում առկա բոլոր բանկոմատներից եւ POS տերմինալներից միեւնույն վճարային քարտով կանխիկացումների համար գործում է սահմանչափ՝ օրական մինչեւ 50 հազար դրամի չափով: Արցախում գործող բանկոմատների ու POS տերմինալների միջոցով կանխիկացման հնարավորությունն ապահովված է ցանկացած բանկի քարտերի համար: Կանխիկի խնդիրը լուծելու համար անհրաժեշտ է Արցախում զարգացնել անկանխիկ վճարման համակարգեր, որը հնարավոր է ապահովել նոր սերնդի ՀԴՄ-ների ներդրման միջոցով:

Շրջափակումը փոխում է տնտեսությունն ու պետության առաջնահերթությունները: Պետությունն արդեն ստիպված է արձագանքել շրջափակման հետեւանքով տնտեսական եւ սոցիալական ոլորտներում առաջացող խնդիրներին՝ վերանայելով իր աշխատանքը, մոտեցումները, ուղղությունները: Միաժամանակ, շրջափակումն ու դրա հետեւանքով ստեղծված ճգնաժամը պարտադրում են ավելի ռացիոնալ օգտագործել առկա ռեսուրսները, բացահայտել բոլոր խնդիրները, այդ թվում՝ ստվերային տնտեսության հետ կապված, ներդնել կառավարման ավելի արդյունավետ մոդելներ: Արցախում ստեղծվել է աշխատանքային խումբ՝ շրջափակման տնտեսական եւ սոցիալական հետեւանքների մեղմմանն ուղղած միջոցառումներ մշակելու նպատակով:

Շրջափակման մեկնարկից ի վեր՝ աշխարհի բազմաթիվ երկրներ ու միջազգային կազմակերպություններ դատապարտել են Ադրբեջանի գործողությունները եւ կոչ արել վերացնել շրջափակումը: Հարցը քննարկվել է նաեւ ՄԱԿ-ի անվտանգության խորհրդում: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը պարտավորեցրել է Ադրբեջանին՝ ձեռնարկել բոլոր անհրաժեշտ եւ բավարար միջոցները՝ վերացնելու շրջափակումը: Հարցը շուտով կքննարկվի նաեւ ՄԱԿ-ի Արդարադատության միջազգային դատարանում (Հաագա)՝ Ռասայական խտրականության վերացման կոմիտեի վարույթի շրջանակներում:

Արցախում եւ Հայաստանում քաղաքացիների կողմից տեղի են ունեցել բազմաթիվ բողոքի ակցիաներ պետությունների դեսպանատների, ՄԱԿ-ի գրասենյակի, Կարմիր խաչի միջազգային կոմիտեի առջեւ, սակայն ոչ մի արդյունք չեն տվել:

Չնայած այդ ամենին, ադրբեջանական կողմը գործում է անպատժելիության մթնոլորտում: Միջազգային հանրությունը պետք է գործի շատ հստակ ձեւով. օրինակ՝ պատժամիջոցներ սահմանելով Ադրբեջանի դեմ եւ պարտադրելով Ադրբեջանին հետեւել միջազգային իրավունքով ստանձնած պարտավորություններին:

Հեղինակ՝ Անի ԱԶԱՏՅԱՆ

Արցախի կառավարությունը պետք է ամբողջությամբ վերանայի սոցիալ-տնտեսական քաղաքականությունը

2022 թվականի դեկտեմբերի 12-ից շարունակվող Արցախի շրջափակման հետեւանքով ի հայտ են եկել լրջագույն տնտեսական մի շարք խնդիրներ. դրանք են՝

- Արցախի պետբյուջեի 20 տոկոս մուտքն ապահովող հանքարդյունաբերության ոլորտի աշխատանքի դադարեցումը,
- Շինարարության դադարեցումը,
- Ապրանքաշրջանառության դադարեցումը,
- Գյուղատնտեսության ոլորտում աշխատանքների խաթարումը,
- Տնտեսավարող սուբյեկտների, մասնավորապես ՓՄՁ սուբյեկտների փակումը,
- Զբոսաշրջության արգելափակումը,
- Ֆինանսական ոլորտում դրամաշրջանառության եւ փողի քանակի նվազեցումը,
- Գործազրկության աճը,
- Ինֆլյացիան,
- Էներգետիկ համակարգի ճգնաժամը,
- Պարենային անվտանգությունը եւ այլն:

Հանքարդյունաբերության ոլորտում Կաշենի հանքավայրի շահագործման դադարեցումը հանգեցրել է 1 800 աշխատակիցների գործազրկության:

ՀՀ-ից ապրանքների ներմուծման դադարեցմամբ պայմանավորված՝ 100-ավոր փոքր խանութներ եւ հատկապես գյուղատնտեսական արտադրանք վաճառող խանութներ փակվել են, ինչը զրկել է դրանց սեփականատերերին եկամտի աղբյուրից:

Արցախ ժամանող հյուրերի բացակայության պայմաններում լրջագույն վնաս է կրում զբոսաշրջության ոլորտը, մասնավորապես՝ հյուրանոցային բիզնեսը:

Սննդի բացակայության պայմաններում լրջագույն վնասներ է կրում նաեւ ռեստորանային բիզնեսը:

Շինարարության ոլորտում աշխատանքների դադարեցման պարագայում գործազուրկ են դարձել 1000-ավոր քաղաքացիներ:

Սպառողների խուճապային վարքագծով պայմանավորված՝ խանութները դատարկվել են, ի հայտ է եկել ապրանքների պահանջարկի աճ, որն էլ հանգեցրել է ինֆլյացիայի, իսկ ֆինանսական ոլորտում կրճատվել է փողի քանակը՝ պայմանավորված այն հանգամանքով, որ քաղաքացիներն իրենց ավանդները կանխիկացնում էին:

Գազամատակարարման դադարեցման արդյունքում էներգետիկ համակարգն ի վիճակի չէ երկար դիմակայելու. ի հայտ են գալիս ջեռուցման, թոնրատների աշխատանքների խաթարումներ:

Անհեռատես տնտեսական քաղաքականության արդյունքում Արցախում այսօր կա ազգային անվտանգության բաղադրիչ հանդիսացող պարենային անվտանգության խնդիր:

Շրջափակումը, իր բոլոր բացասական ազդեցություններով հանդերձ, ցույց է տվել նաեւ ագրարային երկիր համարվող Արցախի գյուղատնտեսական ոլորտում առկա խիստ մտահոգիչ իրավիճակը, մասնավորապես՝ պետական ձախողված քաղաքականությունը հետպատերազմյան շրջանում ջերմոցային տնտեսության զարգացմամբ պարենային անվտանգության խնդիրների լուծման ուղղությամբ: Հազարավոր դոլարների ներդրումներն այս ոլորտում, պատերազմից 2 տարի անց տեսանելի արդյունք չեն ապահովվել:

Արցախի միակ ճանապարհի փակումը, հասկանալի է, որ Արցախի տնտեսությանը պետք է զգալի վնաս հասցներ եւ հանգեցներ ճգնաժամի, սակայն կան որոշակի քայլեր, որոնք անհրաժեշտ է կատարել՝ ճգնաժամային այս իրավիճակում առկա սոցիալ-տնտեսական խնդիրներն ավելի չխորացնելու համար:

Այս խնդիրների լուծմանը հասնելու ուղղությամբ ԱՀ օպերատիվ շտաբը արդեն իսկ իրականացնում է մի շարք քայլեր կարճաժամկետ լուծումների հասնելու համար, մասնավորապես՝ կտրոնային համակարգին անցումը, կանխիկացման սահմանափակումները, հովհարային անջատումները եւ այլն:

Կտրոնային համակարգին անցումը կատարվում է մի քանի տեսակի ապրանքների համար, սակայն պետք է սահմանվեր առաջին անհրաժեշտության կենցաղային ապրանքների ցանկ եւս եւ դրա բաշխումը նույնպես կազմակերպվեր կտրոնային համակարգով: Պետությունը հնարավորինս մեծ թվով խանութների պետք է ապահովի ապրանքներով: Ներկայումս անհասկանալի է, թե ի՞նչ սկզբունքով են ընտրվում այդ խանութները: Երկարաժամկետ հատվածում, մեր կարծիքով, անհրաժեշտ է ռուս խաղաղապահների կամ Կարմիր խաչի միջոցով անհրաժեշտ գյուղմթերքների սերմեր ներմուծել Արցախ եւ այն հատկացնել գյուղացիներին, որպեսզի իրենց սեփական այգիներում իրենց անհրաժեշտ գյուղմթերքը կարողանան աճեցնել եւ ինքնաբավության հասնել, կազմակերպել դասընթացներ դրանց ճիշտ մշակման համար: Սա թույլ կտա նաեւ ինքնազբաղվածություն ապահովել:

Խոշոր գյուղատնտեսներին եւ հատկապես պետական սուբսիդավորմամբ կամ անհատույց ջերմոցային խոշոր տնտեսություն ունեցող անձանց վրա սահմանել վերահսկողություն եւ պետպատվերի շրջանակում կազմակերպել գյուղմթերքի ճիշտ մշակում եւ աճեցում: Խոշոր ջերմոցային համակարգերը, որոնք բավականին ներդրվել են Արցախում, կարող են տարվա ընթացքում մի քանի անգամ բերք ապահովել:

Պետք է կատարել դիզվառելիքի ճիշտ բաշխում, հնարավորության դեպքում՝ ներմուծում ռուս խաղաղապահների օգնությամբ՝ գարնանացանի աշխատանքները կազմակերպելու եւ ամռան շրջանում հատիկեղենի բերքահավաք կազմակերպելու համար: Միաժամանակ, հնարավոր կորուստներից խուսափելու համար պետք է վերանորոգել հակակարկտային կայանները, ապահովել ոռոգումը:

Անասնապահության ոլորտում ձմռան ամիսներին անհրաժեշտ է հնարավորինս անասնակերը ճիշտ բաշխել, այդպիսով խուսափելով նաեւ կովերի գլխաքանակի կրճատումից, որը կհանգեցնի կաթնամթերքի շուկայում դեֆիցիտի, իսկ գարնան ընթացքում արդեն կբարձրանա նաեւ կաթնատվությունը եւ կաթնամթերային ապրանքներով կապահովվի շուկան:

Պետության կողմից պետք է կատարվի վերահսկողություն՝ շուկայում սպեկուլյատիվ ինֆլյացիան բացառելու համար: Պետք է կատարվի կոմունալ ծառայությունների սուբսիդավորում՝ պայմանավորված գործազրկության բարձրացմամբ եւ ընտանիքներում եկամուտների կրճատմամբ:

Ապաշրջափակումից հետո Արցախում առաջնային պետք է լինի այլընտանքային էներգիայի օգտագործման ապահովումը: Համազգային ներուժը պետք է օգտագործել արեւային էներգիայով տնային տնտեսություններին ապահովելու համար:

Դրամաշրջանառության առումով՝ կարծես թե հնարավոր է եղել ապահովել ԱՀ դրամի մուտքը ՀՀ-ից, սակայն պետք է շարունակել կանխիկացման սահմանափակումների կիրառումը:

Հեղինակ՝ Վահագն ԽԱՉԱՏՐՅԱՆ

Ուսանողներն ուզում են այս իրավիճակը հաղթահարել ուսման միջոցով

Ի՞նչ խնդիրներ է հարուցել շրջափակումը բուհական կրթության համակարգում: Այս հարցի վերաբերյալ «Ապառաժ»-ը զրուցել է Մեսրոպ Մաշտոց համալսարանի պրոռեկտոր Ալիսա Բաղդասարյանի հետ:

«Բնականաբար, շրջափակումն ու դրա հետեւանքով առաջացած խնդիրները դժվարություններ են ստեղծել ինչպես մյուս ոլորտների աշխատակիցների, այնպես էլ ուսումնական հաստատությունների համար: Նախ, շեշտեմ այն հանգամանքը, որ մեր ուսանողներից, նույնիսկ աշխատողներից մի քանիսը դեռեւս գտնվում են ՀՀ-ում եւ չեն կարողանում վերադառնալ: Ուստի, իրավիճակից ելնելով, այնպես ենք կազմակերպել ուսումնական գործընթացը, որ հնարավորինս ձերբազատվենք առաջացող խնդիրներից: Այս պահին առաջին կիսամյակի քննաշրջանի եւ հեռակա բաժնի ուսումնական գործընթացի ամփոփմամբ եւ երկրորդ կիսամյակի ուսումնական գործընթացը սկսելու նախապատրաստությամբ ենք զբաղված: Փետրվարի 7-ից առկա ուսումնական գործընթացը պիտի վերսկսվի, չգիտենք ինչ է լինելու, ինչպես է կազմակերպվելու, դեռեւս իրավիճակը պարզ չէ, այն ժամանակ պարզ կլինի եւ տվյալ իրողությամբ էլ կառաջնորդվենք»,- իրավիճակն է ներկայացնում մեր զրուցակիցը:

Խոսելով ուսանողների տրամադրվածության մասին՝ նա նշում է, որ ուսանողները պատրաստակամ են՝ ներկայանալ, սովորել, նրանք ուզում են այս իրավիճակը հաղթահարել ուսման միջոցով: «Բնական է՝ հոգեբանական եւ տնտեսական ծանր իրավիճակում ենք հայտնվել, խնդիրներն առկա են, սակայն ցանկացած խնդիր հաղթահարելի է: Մեր ժողովուրդն ուժեղ է, այս ամենին կդիմանա, որովհետեւ ապրում եւ պայքարում է հողի համար: Մեր ուսանողներն ընկճված չեն, հիասթափված չեն, սա է կարեւորը, իսկ դասախոսներն ամեն ինչ անում են, որպեսզի ուսանողներն իրենց լավ զգան»,- նշում է դասախոսը:

Անդրադառնալով վերջին մի քանի տարվա ընթացքում արտակարգ իրավիճակներում ուսում ստանալու մասին հարցին, Ալիսա Բաղդասարյանը նշում է, որ խնդիրն առավել ընդգծված է դպրոցներում: «Քանի որ ուսանողները հասուն մարդիկ են, խորհրդատվությունների, ինքնուրույն աշխատանքների միջոցով հնարավոր է նյութը տեղ հասցնել, իսկ աշակերտը ուղղորդվելու կարիք ունի: Դրա համար պետք է ուսուցիչները եւ ծնողներն աշակերտներին ուղղորդեն: Հիմա պետք է ուսուցիչ-ծնող փոխհամագործակցությունն ամուր եւ արդյունավետ լինի, որ երեխաները սովորեն, կրթություն ստանան: Դասախոս-ուսանող կապը մեզ մոտ շատ ընդգծված է. թե օնլայն միացումներով, թե առդեմ հանդիպումներով այն ավելի է ամրապնդվում: Իհարկե, ինչ-որ բան պետք է արվի, որ այս իրավիճակն այսպես երկար չշարունակվի: Հատկապես խնդրահարույց վիճակ է դպրոցների համար»,- կարծում է նա:

Տաթեւիկ ԱՂԱՋԱՆՅԱՆ

«Ապառաժ» երկշաբաթաթերթ
Ստեփանակերտ, Կնունյանցների 17,
հեռ. +374 97 38 43, E-mail: aparajtert@gmail.com
Կայքէջ՝ www.aparaj.am

Նյութերի համար պատասխանատու են հեղինակները: Թերթը կարող է տպագրել նաեւ նյութեր, որոնցում արծարծված տեսակետները չի կիսում:
Տպագրվում է Ստեփանակերտի «ԴԻԶԱԿ ՊԼՅՈՒՍ» ՍՊԸ-ում:
Գրանցման վկայական՝ 04: Տպաքանակը՝ 700: Գինը՝ 100 դրամ:

Խմբագիր
Ա. Պուլուզյան